Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 7-ի N 2145 - Լ որոշման

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Արդյունքի և գործողության համար	Նպատակներ և գործողություններ	Ակնկալվող արդյունքը (ցուցանիշը)	Հենանիշ	Թիրախ	Վերջնա-ժամկետ	Պատասխանատու գերատեսչություն
Ռազմավարական ուղղություններ 1. Ֆիզիկական ակտիվությունը և առողջ ապրելակերպը դարձնել ազգային կենսակերպ Թիրախ (2030 թ.) – առողջ ապրելակերպ ունեցող (ներառյալ առողջ ֆիզիկական ակտիվություն) երեխաների/մեծահասակների/տարեցների և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասնաբաժինը 60%, 30%, 10%, 3 %-ից (ըստ հանրային հարցման) հասցնել առնվազն 80%, 50%, 20% և 5 %-ների:						
Մասնավոր նպատակ 1.1	Ապահովել երկրի բոլոր բնակավայրերում առողջ ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու համար հասանելի ենթակառուցվածքներ՝ ներառյալ առնվազն երեք մարզաձևերով զբաղվելու հնարավորություններ: Թիրախ (2030 թ.) – Բոլոր քաղաքային բնակավայրերում ունենալ առողջ ապրելակերպի ենթակառուցվածքներ՝ հեծանվաուղիներ, մարզահրապարակներ, վարժասարքերով հագեցած բացօթյա խաղահրապարակներ, իսկ գյուղական բնակավայրերում ձևավորվող կրթահամալիրների շրջանակում ստեղծել ֆուտբոլի մարզադաշտեր:					

Գործողություն 1	Առկա հանրային բացօթյա խաղահրապարակներ և մարզական կառույցների գույքագրում	Նորոգման, հիմնանորոգման առաջնահերթությունները սահմանված են	ոչ	այո	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Գործողություն 2	ՀՀ քաղաքներում հեծանվաուղիների քարտեզագրում և գծանշում	ՀՀ քաղաքներում առկա են ապահով և անվտանգ հեծանվաուղիներ/քաղաքների մասնաբաժինը, որտեղ առկա են գծանշված հեծանվաուղիներ	0%	100%	2030 թ.	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ,Երևանի քաղաքապետարան, ՀՀ համայնքապետարաններ և ՀՀ ներքին գործերի նախարարություն
Գործողություն 3	ՀՀ քաղաքներում մարզահրապարակների կառուցում, կահավորում և արդիականցում	ՀՀ քաղաքներում առկա են հասանելի և պահանջված բացօթյա մարզահրապարակներ և խաղահրապարակներ Կառուցված մարզահրապարակների թիվը	0	30	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքապետարաններ
Գործողություն 4	ՀՀ մարզերում խաղային մարզաձևերի համար թեթև կոնստրուկցիաներով հավաքովի մարզադահլիճի տեղադրում	Բոլոր մարզերում առկա է հավաքովի մարզադահլիճ Տեղադրված մարզադահլիճների թիվը	0	10	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե

Գործողություն 5	Մեկնարկել խոշորացված համայնքներում լողավազան և ֆիթնես սրահ անպայմանորեն ներառող տիպային մարզակառույցի կառուցման գործընթաց	Խոշորացված համայնքներում առկա են տիպային մարզակառույցներ Համայնքների մասնաբաժինը, որտեղ կառուցվել են տիպային մարզակառույցներ (խոշորացված համայնքների մասնաբաժին)	0	13.0	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, մարզպետարաններ, համայնքապետարաններ, Քաղաքաշինության կոմիտե
Գործողություն 6	ՀՀ մարզերում ձևավորված կրթահամալիրներին կից, ինչպես նաև տեղորոշված տարածքներում արհեստական խոտածածկով դաշտերի տեղադրում	Բակային ֆուտբոլի զարգացում, տեղադրված դաշտերի թիվը	0	300	2030 թ.	Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա (համաձայնեցմամբ)
Մասնավոր նպատակ 1.2	Ձևավորել բնակչության դրական դիրքորոշում ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ: Թիրախ (2030 թ.) – Հարցվածների առնվազն 80 %-ն արժևորում է ֆիզիկական ակտիվությունը					
Գործողություն 1	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրության և տվյալների հավաքագրման գործիքակազմի ներդրում և հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրություն	Ուսումնասիրված է ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ բնակչության դիրքորոշումը և ժամանակի ընթացքում դրական դիրքորոշման աճ է գրանցվում (դրական դիրքորոշում ունեցող հարցվածների համամասնությունը)	ոչ	80	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գործողություն 2	Անվանի մարզիկների հանդիպումների կազմակերպում դպրոցականների հետ	Սպորտի և ֆիզիկական կուլտուրայի դերի բարձրացումը վնասակար սովորությունների դեմ (տարեկան միջոցառումների թիվը)	0	6	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 3	Առողջ ապրելակերպը, ֆիզիկական ակտիվությունը և ադապտիվ սպորտը քարոզող փաստավավերագրական կամ գեղարվեստական ֆիլմերի պատրաստում և հեռարձակում	Առողջ ապրելակերպը և ֆիզիկական ակտիվությունը, ադապտիվ սպորտը քարոզող գեղարվեստական կամ փաստավավերագրական պատրաստված կամ հեռարձակված ֆիլմերի թիվը	0	3	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 4	Հանրային վայրերում առողջ ապրելակերպը և ֆիզիկական ակտիվությունը խրախուսող տեղեկատվական վահանակների տեղադրում, տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում	Տեղադրված վահանակների թիվը	0	6000	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան, համայնքապետարաններ (համաձայնեցմամբ)
Գործողություն 5	Սպորտի թանգարանի ստեղծում	Սպորտի և սպորտային հաջողությունների մասին ազգաբնակչությանը և զբոսաշրջիկների իրազեկում	ոչ	այո	2028 թ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀԱՕԿ
Մասնավոր նպատակ 1.3	Խթանել բնակչության մասնակցությունը զանգվածային մարզական միջոցառումներին: Թիրախ (2030 թ.) – Կրկնապատկել մասնակցությունը					

Գործողություն 1	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական մրցաշարերի մասսայականության մեծացում՝ ընդգրկելով հանրության տարբեր խմբերին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ավագ սերնդի ներկայացուցիչներին, կանանց	Բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության մեծացում (տարեկան մասնակիցների թիվը)	2850	5700	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 2	Տարեկան զանգվածային մարզական հանրապետական միջոցառումների անցկացում հանրության բոլոր խմբերի համար, այդ թվում՝ խրախուսելով հաշմանդամություն ունեցող անձանց, ավագ սերնդի մարդկանց, կանանց մասնակցությունը	Տարեկան առնվազն մեկ հավելյալ միջոցառման ավելացում (միջոցառումների քանակը)	4	11	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 3	Առողջ ապրելակերպը, այդ թվում՝ Ֆիզիկական ակտիվությունը խթանող էլեկտրոնային հավելվածների մշակում և ներդնում	Առողջ ապրելակերպը խթանող հավելված (մշակված հավելվածների թիվը)	0	1	2027 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Գործողություն 4	ՀՀ մարզերի և համայնքների մարզական վարկանիշային սանդղակների մշակում և ամենամյա հրապարակում	ֆիզկուլտուրային մարզային վարկանիշային համակարգը ներդրված է Սանդղակը մշակված է, արդյունքները հրապարակված են	ոչ	այո	2025 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գործողություն 5	Մարզական զանգվածային միջոցառումների անվանակոչում մարզաձևի հայազգի անվանի մարզիկների անվամբ	Մարզական միջոցառումների մասսայականացում՝ անվանի մարզիկների անուններով բրենդավորմամբ (ընթացիկ)	0	10	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Մարզական հասարակական կազմակերպություններ
Գործողություն 6	Մանկապատանեկան մարզադպրոցներում բաց դռների օրերի և մրցույթների կազմակերպում	Մարզական նախասիրություններ և կարողություններ ունեցող երեխաների բացահայտում և ներգրավում մարզադպրոցների խմբերում, (տարեկան միջոցառումների թիվը)	0	200	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Մարզադպրոց, Մարզական հասարակական կազմակերպություններ, Ակումբներ
Գործողություն 7	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կամավոր աշխատանքի խրախուսում	ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ընդգրկված կամավորների թվաքանակ	0	1000	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 8	Մանկապատանեկան մարզադպրոցների անվանակոչում բարձրագույն նվաճումների հասած ՀՀ մարզիկների անուններով	Մարզաձևերի մասսայականացում՝ անվանի մարզիկների անուններով բրենդավորման միջոցով (ընթացիկ)	0	5	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն , Տեղական ինքնակառավարման մարմիններ, Մարզպետարաններ, Մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնեցմամբ), Համայնքապետարաններ

Ռազմավարական ուղղություններ 2. Հայաստանի Հանրապետությունը դարձնել սպորտային բարձր նվաճումների երկիր Թիրախ (2030 թ.) – Ունենալ օլիմպիական խաղերի առնվազն 3 չեմպիոն, աշխարհի առնվազն 8 չեմպիոն և Եվրոպայի առնվազն 15 չեմպիոն:						
Մասնավոր նպատակ 2.1	Յուրաքանչյուր մարզում ունենալ բարձր նվաճումների սպորտի խթանման համար անհրաժեշտ սպորտային ենթակառուցվածքային համակարգ: Թիրախ (2030 թ.) – Պետություն-մասնավոր համագործակցությամբ արդիական մարզագույքային պայմաններ ունեցող և միջազգային չափանիշներին համապատասխան՝ մասնագիտացված մարզումների կազմակերպման ենթակառուցվածքների առկայություն՝ յուրաքանչյուր մարզում առնվազն 1 պետական համալիր մարզադպրոցի առկայության բաղադրիչով:					
Գործողություն 1	Չափանիշներին չհամապատասխանող մարզադպրոցների վերակառուցում (կառուցում) և վերազինում	վերակառուցված (կառուցված) և վերազինված մարզադպրոցների քանակը	61	174	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 2	Յուրաքանչյուր մարզում մեկական պետական համալիր մարզադպրոցի հիմնում՝ մարզադպրոցների տիպային կանոնադրության վերանայմամբ, որը կամրագրի մարզման գործընթացի շարունակականությունը	Առկա է յուրաքանչյուր մարզում մեկ պետական համալիր մարզադպրոց	1	10	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 3	Միջազգային ստանդարտներին համապատասխան մարզաբազաների ստեղծման ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում՝ պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ	Մարզային համալիր մարզադպրոցներն ապահովել հենակետային մարզաձևերի միջազգային ստանդարտներին համապատասխան մարզակառույցներով Մարզակառույցների թիվը	0	6	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ

Գործողություն 4	Մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին մարզագույքով ապահովում	Մարզումների համար անհրաժեշտ ժամանակակից մարզագույքով ապահովված մարզակառույցներ (տարեկան թիվը)	0	50	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 5	մարզադպրոցների ուսումնական ծրագրերի մշակում	մարզադպրոցների մշակված ծրագրեր	0	1	2025 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնավոր նպատակ 2.2	Ձևավորել սպորտային ժամանակակից բժշկագիտամեթոդական և բժշկավերականգնողական համակարգ: Թիրախ (2030 թ.) – Ստեղծել սպորտային ժամանակակից բժշկագիտամեթոդական և բժշկավերականգնողական համակարգ:					
Գործողություն 1	Սպորտային բժշկագիտամեթոդական և բժշկավերականգնողական կենտրոնի հիմնում	ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ախտորոշումը և ֆիզիկական մարզման պատրաստության գնահատումը	ոչ	այո	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Առողջապահության նախարարություն
Գործողություն 2	Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության բնագավառում կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետ համակարգի ստեղծում	Համակարգն առկա է // սպորտային բժշկության բնագավառում պատրաստված կադրերի թվաքանակը/// Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության բնագավառում վերապատրաստված կադրերի տարեկան թվաքանակը	0	3	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Առողջապահության նախարարություն
Գործողություն 3	Սպորտային բժշկության մասնագետների որակավորման ոլորտային շրջանակի	Մշակված և վերանայված կրթական չափորոշիչների թիվը	0	1	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

	հաստատում և կրթական ծրագրերի վերանայում					Առողջապահության նախարարություն
Գործողություն 4	Միջազգային չափանիշներին համապատասխան սպորտային բժշկության մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի մշակում	Միջազգային չափանիշներին համապատասխան պատրաստված մասնագետների թվաքանակը// Միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստված մասնագետների թվաքանակը	0	1	2026 թ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Առողջապահության նախարարություն
Գործողություն 5	Դոպինգի կիրառման դեմ պայքարի իրավական մեխանիզմների կատարելագործում	Հաստատված օրենսդրական կարգավորում	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Առողջապահության նախարարություն
Գործողություն 6	Սպորտային բժշկության ոլորտում բժիշկների պատրաստման և վերապատրաստման համակարգի կատարելագործում՝ սպորտում դոպինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ստեղծում	Սպորտում դոպինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների առկայություն	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Առողջապահության նախարարություն
Մասնավոր նպատակ 2.3	Բնագավառի լիազոր մարմնի, մարզական կազմակերպությունների (Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներ, այլ մարզական հասարակական կազմակերպություններ, միություններ, ընկերություններ) իրավահարաբերությունների արդյունավետության բարձրացում:					

Գործողություն 1	Պետություն, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե, մարզական ֆեդերացիաներ, մարզական կազմակերպություններ հարաբերությունների և գործառույթների հստակեցում	Հարաբերություններն ու գործառույթները հստակեցված են համապատասխան իրավական ակտերով	0	1	2025 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 2	Սպորտի մեջ մասնավոր ոլորտի ներգրավվածության բարձրացում՝ ենթակառուցվածքների ձևավորման, մարզական կառույցների ցանցի կառավարումը մասնավորին պատվիրակման միջոցով	Հովանավորչական գործունեություն, մարզական ակումբների ստեղծում, մարզակառույցների և մարզա-առողջարարական կենտրոնների կառուցում,	0	2	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնեցմամբ)
Գործողություն 3	ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել առանձին մարզաձևերի զարգացման ծրագրեր, այդ թվում՝ ՀՀ-ում Ֆուտբոլ, բասկետբոլ, շախմատ և ձմեռային մարզաձևերի զարգացման ազգային ծրագրերը	Կառավարության որոշման նախագիծ	0	4	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 4	Դպրոցական և ուսանողական սպորտի զարգացման համար պայմանների ստեղծում, այդ թվում՝ ուսանողական ակումբների ստեղծում	ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ընդգրկված դպրոցականների թվաքանակը // ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ընդգրկված ուսանողների թվաքանակը	40000	42000	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գործողություն 5	Մարզումների յուրաքանչյուր փուլում մարզիկներին բացահայտելու, ընտրելու և ուղղորդելու արդյունավետ համակարգի ստեղծում	Նոր համակարգի կիրառմամբ բացահայտված մարզիկների թվաքանակը	0	1	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 6	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տվյալների բազայի կառավարման համակարգի ստեղծում՝ տվյալների հավաքագրման և կառավարման գործընթացի թվայնացում և դրա միջոցով վարչական ռեգիստրի վարում	Տվյալների թվային կառավարման համակարգն առկա է	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնավոր նպատակ 2.4	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կարողությունների զարգացում ու մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում					
Գործողություն 1	ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման ոլորտում մարդկային կարողությունների զարգացման համակարգի ներդնում	Համակարգն առկա է (ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կառավարման համակարգն ամբողջական գործարկված է)	0	1	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 3	Սպորտային գիտության զարգացման պայմանների ապահովում	ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացված կրթագիտական և հետազոտական ծրագրերի թիվը	0	1	2026 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 4	Հենակետային մարզաձևերի մրցավարների որակավորման աստիճանական կարգի մշակում և ներդնում	Համակարգն առկա է	0	1	2030 թ.	ՀԱՕԿ, մարզական հասարակական կազմակերպություններ

Գործողություն 5	Հենակետային մարզաձևերի մրցավարների գործուղում միջազգային վերապատրաստման դասընթացների	Ունենալ վերապատրաստված միջազգային կարգի մրցավար (տարեկան թվաքանակը)	0	30	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀԱՕԿ, Մարզական հասարակական կազմակերպություններ,
Գործողություն 6	Հենակետային մարզաձևերի ֆեդերացիաների ներկայացուցիչների ակտիվ մասնակցության ապահովում միջազգային ֆեդերացիաների կողմից կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին	Միջազգային մարզական կազմակերպություններում տարեկան մեկ մասնակցություն	0	60	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀԱՕԿ, Մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնեցմամբ)
Գործողություն 7	ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացների և ատեստավորման գործընթացի կազմակերպում՝ դրա արդյունքներով հավելավճարների տրամադրմամբ	Ունենալ վերապատրաստված մարզիչ-մանկավարժներ (տարեկան մասնակիցների թիվը)	176	1408	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
		Ունենալ ատեստավորված և դրա արդյունքներով հավելավճարներ ստացող մարզիչ-մանկավարժներ (տարեկան մասնակիցների թիվը)	6	1171	2030 թ.	
Գործողություն 8	Միջազգային ստանդարտներին համապատասխան՝ մարզիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում	Ունենալ վերապատրաստված միջազգային կարգի մարզիչներ	0	2	2030 թ.	ՀԱՕԿ, մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնեցմամբ)

Գործողություն 9	Բարձրագույն նվաճումներ ունեցող մարզիկների, մարզիչների, բնագավառի բազմավաստակ աշխատակիցների խրախուսում	Ունենալ մարզական հանրության հեղինակության բարձրացում (մասնակիցների թիվը)	250	1750	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնավոր նպատակ 2.5	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի միջազգայնացում					
Գործողություն 1	ֆիզիկական կուլտուրայի և մարզական միջոցառումների անցկացման ընթացքում անվտանգության ժամանակակից համակարգերի ու մեխանիզմների ստեղծում, այդ թվում՝ սպորտում բռնության դեմ պայքարի գործիքակազմի ներդրում	Համակարգն առկա է	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 2	Մարզական միջոցառումների անցկացման անվտանգության և սպասարկման իրավակարգավորումների մշակում և ներդնում, այդ թվում՝ միջազգային համապատասխան կոնվենցիաների վավերացման միջոցով	Իրավակարգավորումների առկայություն	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 3	Մարզադաշտերի լիցենզավորման ընթացակարգերի և հավաստագրման չափանիշների սահմանում՝ անվտանգությունը երաշխավորող պայմանների ապահովում	Նոր չափանիշներին համապատասխան լիցենզավորված և հավաստագրված մարզադաշտերի թիվը	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գործողություն 4	Մարզական մրցումների մեքենայությունների հնարավոր կամ փաստացի դեպքերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման մեխանիզմների ստեղծում, այդ թվում՝ տեղեկատվական հարթակի ստեղծում և օրենսդրական դաշտի կատարելագործում	Մարզական մրցումների մեքենայությունների փաստացի արձանագրված դեպքերի թիվը Մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի հետ կապված տեղեկատվական հանգույցի առկայություն Օրենսդրական հաստատված փաթեթ	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 5	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կառույցների հետ փոխհամագործակցության զարգացում	Միջազգային հարթակներում գրանցված՝ Հայաստանի ներկայացուցիչների թվաքանակը	0	1	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գործողություն 6	ՀՀ 3 ֆուտբոլային մարզադաշտերի կառուցում, այդ թվում՝ 1-ը ազգային	ՀՀ միջազգային չափանիշներին համապատասխան մարզադաշտերի առկայություն	0	3	2030 թ.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ